

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2019Թ. ԿԱՏԱՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առողջապահություն

- 2019թ.-ին մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է 767420.3 հազ. դրամ: Մատուցվել է 79288.2 հազ դրամ վճարովի ծառայություններ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում եղել է 60393.4 հազ.դրամ (աճը կազմում է 18894.8 հազ. դրամ):
- 2019թ.-ի ընթացքում պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 56 տեղից ուղեգրող հանձնաժողովի կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 40 քաղաքացի, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 7 մեծահասակ և 6 երեխա:
- 2019 թվականին պոլիկլինիկաներում և ամբուլատորիաներում աշխատող բժշկների աշխատավարձերը բարձրացվել են 15%-30%-ով:
 - 2019 թ. ընթացքում հաշվառվել է 315 ծնունդ:
 - Մարզի հիվանդանոցային բժշկական հիմնարկները համալրվել են բժշկական, բուժքույրական նոր կադրերով և բուժսարքավորումներով: Եղեգնաձորի ԲԿ-ում ավելացել է շտապ օգնության 4 բրիգադ:
 - Մարզում <<Լոյս հայի աչքերին>> ծրագրի շրջանակներում իրականացվել են մասնագետների այց սահմանամերձ 4 գյուղեր: Բուժման կարիք ունեցող բնակիչները հերթագրվել են հետազայում նույն ծրագրի շրջանակներում վիրահատվելու համար:
 - Պետական պատվերի շրջանակներում վերապատրաստվել են մարզի 16 բուժաշխատողներ:

Սոցիալական ապահովության բնագավառ

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի սոցիալական աջակցության տարածքային 3 գործակալություններում փաստագրվել են 2266 ընտանիքներ, որից նպաստառու են 1864-ը: Նրանց վճարվել է 673,7մլն դրամ նպաստ: Սոցիալական համագործակցության աշխատանքները համակարգող խորհուրդների որոշումներով նպաստի համակարգից դուրս մնացած սոցիալապես անապահով 425 ընտանիքների նշանակվել է հրատապ եռամսյակային դրամական օգնություն, որոնց վճարվել է 23 մլն դրամ:

ԽՍՀՄ խնայբանկի ավանդի փոխհատուցում են ստացել 475 քաղաքացիներ 75,6 մլն դրամի չափով :

<<Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրման>> ծրագրում ընդգրկվել է 45 ընտանիք:

Մարզի երեք զբաղվածության տարածքային կենտրոններում 2019թ. ընթացքում գրանցվել են 1017 գործազուրկներ: <<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>> ծրագրի շրջանակում իրականացվել է 5 ծրագիր 4500,0 հազ դրամ արժողությամբ:

<<Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին աջակցության տրամադրում>> ծրագրով ժամանակավոր աշխատանք է ունեցել 69 գործազուրկ: Մարզի երեք սոցիալական ապահովության տարածքային բաժիններում հաշվառված են 9263 կենսաթոշակառուներ, ամսական միջին կենսաթոշակի չափը կազմել է 39832 դրամ:

Հաշվառվել է բնակարանի բարելավման կարիք ունեցող հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին և զոհված (մահացած) զինծառայողների 44 ընտանիքներ:

**<< Վայոց ձորի մարզպետարանի
առողջապահության և սոցիալական ապահովության
վարչության պետ** **Վ.Ասլանյան**

17.01.2020թ.